Արձանագրություն N 2
ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17 նոյեմբերի 2021թ
ժամը 11:45

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Դավիթ Մելիքյանը
անդամներ՝ Նառա Բաղդասարյանը, Արբակ Սանամյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի բացման մասին

(Դավիթ Մելիքյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	***Մասնակցի անվանումը***		***Մասնակցի հասցեն և կապի միջոցները***
1	***2***		***3***
1	«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ	-	ք. Երևան, Ահարոնյան 2, հեռ. 099 45 51 31,
2	ՊԵԼԵԿԱ	-	ք. Երևան Ալեք Մանուկյան 9, II-208 սենյակ, հեռ. +374 60 61 00 04

բ/ Մասնակիցների կողմից աճուրդի ամփոփման ժամկետի ավարտին առաջարկված գները հետևյալն են.

Հ/Հ	Մասնակցի	
	անվանումը	առաջարկած գինը առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)
1	2	3
1	«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ	760000
2	ՊԵԼԵԿԱ	888999
նախահաշվային գինը (ՀՀ դրամ)		970500

գ/ Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն ներկայացվել, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

II. Հայտերի գնահատման մասին

(Դավիթ Մելիքյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց հայտերով ներկայացված փաստաթղթերը և արձանագրեց, որ.

ա/ ՊԵԼԵԿԱ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

բ/ էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի կողմից մերժվել են ՊԵԼԵԿԱ-ի կողմից ներկայացված հայտը՝ հետևյալ հիմնավորմամբ, առաջարկված գինը գերազանցում է նախահաշվային գինը:

գ/ «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի կողմից իրական շահառուի վերաբերյալ ներկայացված հայտարարագրը (հավելված 1.2) չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ մասնավորապես. հայտարարագրի լրացման կարգի պահանջներին համապատասխան լրացված չէ իրական շահառուի վերաբերյալ ներկայացված հայտարարագրի 1.3. ենթաբաժնի 1.3.3 կետը, 4.8 ենթաբաժինը, հավելված 1.2-ում «Էլեկտրոնային աճուրդի հրավերի» բառերի փոխարեն գրված է «գնանշման հարցման մրցույթի հրավերի» բառերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը հրավերով սահմանված կարգով որոշեց.

ա/ մերժել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտը հրավերի 8.9 կետով սահմանված պահանջի համապատասխան:

բ/ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդի հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն համակարգի միջոցով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

գ/ ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. նոյեմբերի 19-ին ժամը 12.40-ին ք. Երևան, Նալբանդյան 13 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Դավիթ Մելիքյան

անդամներ՝ _____ Նառա Բաղդասարյան

_____ Արբակ Սանամյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 17 նոյեմբերի 2021թ.

ՄՄԾ ԷԱՃԾՁԲ-22/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Մելիքյանս, անդամներ՝ Նառա Բաղդասարյանս, Արբակ Սանամյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

նախագահ _____ Դավիթ Մելիքյան

անդամներ՝ _____ Նառա Բաղդասարյան

_____ Արբակ Սանամյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան